## 39. ԿՅՈՒԼ ՏԵՌԱԾ ԿԸՆԵԳՅԸ

*Ընում ա, չընում մին Թաքավէր, ըտրան ինում ա մին տղա։ Տանում ըն բխտըրեշում կոշտը։*

*Բըխտըրեշին ասում ա. — Վէր էտ տըղան փըսակվե, կյունը ուտլական ա։*

*Թաքավէրը մին ծի յա տամ տըղեն, վէր կոնյա ընդրանավ պըշտպանվե։ Մին հետ տղան քյընում ա վըրերս, պըտահում ա մին չուբանի։ Տըեսնում ա էրկու շոն օնե, շները օղում ա։*

*Չոբանը ասում ա.— Ծիտ ինձ տո, շները քյըեղ տամ։*

*Ծին տամ ա, շները ինքյ օնում։*

*Քյինամ ա, քյինամ, տըեսնում ա մին կյըետ, մնամ ա վըեննը կտցած։ Շները քյինամ ըն մին ծիյի յըրա, տղան հետանը։ Քյինամ ըն տըեսնըմ մին պառավ նստած, մին կյետու ղըրաղե։*

*Էտ տըղան ասում ա.— Հո՞ւնց անիմ, վէր կյետավը ընցընիմ։*

*Պառավը տըեսնըմ ա, վէր շատ ա ղաշանք անըմ, ասըմ ա.*
*—Ա՛ բալա, կա մին մա̈ղ տամ, տար քցի կյըետավը, անց կաց, ամմա մա̈ղը ծեռքատ վէր չի տինի՛ս։*

*Տղան տանըմ ա մա̈ղը քցըմ, կյըետավը անց կենում։*

*Քյինամ ա, տըեսնըմ մին պալատ, մաչին մի ախճիգյ։ Ասըմ ա.*
*—Ա՛յ ախճիգյ, տու լհա̈ իմ պենըս ըս, իմ փա̈նդըս ըս, իմ ջանըս ըս։*

*Ասըմ ա պըծնում, փըսակվըմ, մնամ ըտըեղ։ Հա̈մա̈ն կյունը տղեն վընըհըտերավը կյամ ա, մընում կյետեն ղըրաղեն վըեննը կացած։ Էտ տըղեն կնեգյը մա̈ղը տուս ա օնում մարթին շուբան,*

Թաքուն տանըմ կյըետավը քցում, կյո̈ւլը յոր ա օնում կյամ պալատը։

Էտ տըղան, տխուր նըստած, կընգանը ասում ա.— Քշերըս շները սըխ կկապիս, քյինա̈մ ըմ վըերսի։

Կնեգյը կյո̈ւլ ա տըեռնըմ, էն մին կյո̈ւլյին նըհետ քյինո̈ւմ ծմակը, վեր էն տըղեն օտին։ Շները պեց ըն ընգնում, կյամ ըղադըմ էտ տղեն։ Տըղան եռ ա տեռնըմ, կյամ հորը տոնը, ո̈նրա̈ն հետե ազատ ապըրում։